

ԲԱԶՄԱՆԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

(Շար. տես. 1920 թգմ. էջ 18).

Տակաւին մեր վերջին եզրակացութեան չհասած, կարեւոր խնդիր մը կայ լուծելու. այսինքն. Պրետարքոսի բնագրի մէջ, արդեօք օտար ձեռք մտած է թէ ոչ:

Անտոնիոսի Զուգակշռին մէջ, մեզի կը թուի թէ՛ օտարամուտ կտորներ կան, յատկապէս Արտաւազդի նկատմամբ, և այս միակողմանի ներմուծումներու նպատակն է հաւաստել թէ՛ Արտաւազդ, ըստ մի հատուածին 6 հազար ձիաւորով և 7 հազար հետեակով, (էջ 168) և ըստ միւսին՝ տասն և վեց հազար ձիաւորներով (էջ. 181) Բաղկացուցիչ մասն էր Անտոնիոսի բանակին, երբ նա շարժեցաւ Պարթևաց դէմ: Եւ կը հետեցնեն թէ՛ Հայոց արքայն իւր զօրքերով դասայիք եղաւ և անոր համար յաղթուեցաւ Անտոնիոս (էջ 160 և 181):

Այս ներմուծութիւնք բոլորովին անտեղի են: Վասնզի կը պարունակեն ժամանակագրական և աշխարհագրական այնպիսի սխալներ, որ չենք կարող վերագրել Պրետարքոսի գիտութեան և կշռադատ մտքին: Անիմաստ ճիգ մ'է որ կը թափուի Անտոնիոսի դաւաճանութիւնը արդարացնելու, մինչ պիտի տեսնենք յետոյ որ Պրետարքոս և Տակիտոս ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ և ՔՍՍՄՍԵՆԻ ՈՃԻԳ կը կոչեն Անտոնիոսի՝ Քաջապարտ և խօսքի տեր Հայոց արքայի դէմ ցոյց տուած վարմունքը և գործքը:

Մեր նպատակն է ընդհակառակն, ապացուցանել թէ Արտաւազդը բնաւ մասնակցած չէ Անտոնիոսի պատերազմական գործողութեանց, և Անտոնիոս յանգէտս Հայոց արքային կը յարձակի Մարաց թագաւորութեան վրայ, վստահանալով նախ քաղաքական խաղի մը և ապա իւր բազմագունդ և հզօր բանակին վրայ:

Համոզելու համար թէ Արտաւազդը Անտոնիոսի արշաւանքին մասնակցած չէ, երկու բան ի նկատի պէտք ենք առնել. դաշ-

նակցութեան իսկութիւնն և խարդախած բնագրի վերլուծումն:

Նախ դաշնադրութիւնը:

Անտոնիոս Սամուսատի մէջ Արտաւազդի հետ դաշն կնքած ժամանակ, հաստատուած և ծրագրուած պիտի ըլլայ նաև ապագայ արշաւանքի ժամանակը և տեղին: Հայոց թագաւորներու համար, ժամանակը գալունն էր, և տեղին՝ Հայաստանի մէջ. ուստի Անտոնիոս իւր հզօր և իմաստուն նիւակակցի խորհուրդներուն համոզուած, հաստատած են այդ ծրագրով և ճանապարհով տանել Պարթևաց դէմ Հայոց և Հռոմայեցոց բանակները, անցնելով Երասխա իւր և դիմելով Արտապատական աշխարհն, ինչ որ բացայայտ կը հասկացուի Պրետարքոսի խօսքերէն, զոր յետոյ պիտի տեսնենք:

Արդ Անտոնիոս խտորեցաւ այդ ծրագրէն կամ կասկածելով Արտաւազդի վրայ, կամ աւելի հաւանականաբար, Մոնէսիսի առ նա դիմելով՝ լաւագոյն պատեհ մը կարծեց գտնել դիրապատրաստ դափնիներ կորզելու, որով Հայաստան գտնարելու զօրքերը երկար ժամանակի գործ համարելով, ինքն կը փութայ համաօտո ճանապարհով յարձակիլ Պարթևաց վրայ, որպէս զի կարենար Հռոմ Մերակուտէն խնդրել «Պարթևական» տիտղոսն: Մինչ այս մինչ այն Անտոնիոս պատերազմի պատրաստութիւնը իւր տեղակայներուն յանձնելով ինքը դիմեր էր խալիւա Տարենտոնի մէջ Հոկտաւիանոսի հետ հաշտուելով, ինքը գրեթէ մի տարի յետոյ՝ կը վերադառնայ փիւնիկէ Սպիտակ Ուան կոչուած տեղը, ընդ մէջ Բէյրութի և Սիդոնի. ուր հրաւիրուեցաւ կլէոպատրա: Անտոնիոսի ընծայած շուքն ու պատինն այս գլխոյին կը զայրացնէ չարաչար գլխերակոյտն, համարելով անոր վարմունքն՝ նախատինք և նուաստացուցիչ Հռոմէական անուան, որ այլ ևս կը նկատուի փաստակար խալիւա և թշնամի հայրենեաց: Մերակուտն տրամադրութենէն օգտուելով Հոկտաւիանոս, ծածկապէս կը դաշնակցի Արտաւազդի հետ ընդդէմ Անտոնիոսի, որպէս զի ձեռնթափ

լինի Անտոնիոսէ, Պարթևաց զէմ արշաւած ժամանակ:

Ինչ Անտոնիոս Սպիտակ Աւանի մէջ կ'ընդհատուի սիրով տարուած, կերպով մը մուսուլման տուեր էր պատերազմի գործը. այդ ատենները Արշաւորի բռնութիւններէն փախած, երևելի նախարար մը, Մոնէսիս անուն, կ'ապակին ի առ Անտոնիոս Սպիտակ Աւանի մէջ: Անտոնիոս իբրև նոր ոմի թեմախոսով կ'ընդունի զնա, որոյ խորհրդով պատերազմի հանդերձանքն կը շտապեցնէ: Մոնէսիս կը խոստանայ առաջնորդել բանակին. Հոռոմայեցին կը կարծէ՝ հասնիլ և յաղթելով մէկ պիտի ըլլայ. ուստի շատ հաւանական է թէ Մոնէսիս զգուշացուցած է զԱնտոնիոս պատերազմի նոր ծրագիրն չյայտնել և ոչ Արտաւազդին, որ թէ և դաշնակից էր Հոռոմայեցւոց, բայց մի և նոյն ժամանակ բարեկամու թեմար էր Պարթևաց հետ:

Փրատ կամ Արշաւոր որ լաւ կը հասկանար, թէ այնպիսի փախստական մը որքան վնաս կրնար հասցնել իրեն, ամեն հնարք բանեցուց սիրար շահելու, և Մոնէսիս՝ Թագաւորի խոստման և երդման վրայ վստահելով, որ իրեն կը վերադարձը՝ նէր նախկին բարձն և իր ստացուածքը, դարձաւ առ Արշաւոր: Անտոնիոս իր գեղեցիկ երազներովը մնաց յուսախար: Անտոնիոս թէպէտ ակամայ թոյլ տուաւ վերադառնալու, սակայն Հոռոմայեցւոց յատուկ խորամանկութեամբ ուզեց օգուտ քաղել իւր առաջադրած նպատակին համար: Բարեկամութիւն կեղծաւորելով, զՄոնէսիս միջնորդ բռնեց հաշտութեան Պարթևաց հետ, նա կը յուսար դաշնախօսութեան և հաշտութեան ակնկալութեամբ զբոլեցնել և խաղցնել Պարթևներն, որպէս զի կարենայ ինքն յանկարծակի և յանպատրաստից ինկնալ անոնց վրայ, ժամանակ չտալով կանխաւ պատրաստուելու պատերազմի:

«Իսկ իրեն առաջեաց արջայն Պարթևաց և կռէր առ ինքն՝ զՄոնէսիս ի հուստ աշոյն իւրոյ, մտադիւրագոյն յայնժամ Անտոնիոս դարձուցանէր առ նա զայրն. զհուստ ամէր խաբել յայնժամէ զՓրատիստ՝ իբրոյ խաղաղութեան հաստատել ընդ մեզ». Պլուտ. Զ. 158.

Մոնէսիսի զնալէն յետոյ, Անտոնիոս զկընդհատուի կ'ուղարկէ Էդիպոսս. վասն զի տուեալ հրամանին համաձայն հապճեպով կը հասնէին Արարիոյ, Պարթևստիսու և Փոքր Ասիոյ Հոռոմական և նիզակակից Թագաւորներու զօրքերն, որ եկան խմբուեցան Սպիտակ Աւանի մէջ: Այս դաշնակից Թագաւորներու միջէն կը պակսէր Արտաւազդ, իւր յատուկ պատճառներու համար, զոր ի ստորեւ պիտի թուենք մի առ մի: Բացակայ էր նաև Անտոնիոսի ամենաընդունակ զօրավարներէն մին՝ Կանիդիոսը, (Պլ. 189) որ զնացեր էր նուաճելու Վրաստանը, Աղուանիստանը և Կովկասու լեռնոյնները, որպէս զի Պարթևաց օգնութեան չկարենան զալ: Եւ որովհետև զոգ մի տարի առաջ որոշուած էր Հոռոմական բանակն հաւաքել Հայաստանի մէջ ձմերկու, զարնան արշաւանքին պատրաստ գտնուելու համար (Պլ. 159), ուստի հաւանական է որ Կանիդիոս այդ զօրածողովի ժամանակ Հայաստան Արտաւազդի մօտ գտնուէր. կամ հեռուներ մնացած: Որով մեր խելամուտեան կը հակառակի Պլուտարքոսի զբաժն թէ Արտաւազդ վեց հազար ձիաւորով և եօթն հազար հետեակով դաշնակիցներուն ամենից զօրաւորը, կանխեմ հասեր էր առ Անտոնիոսի Սպիտակ Աւանը:

Այս վկայութիւնը, ինչպէս յառաջն ասացինք, է այն խարդախած կտորներէն մին, զոր Անտոնիոսի կողմի պատմիչներու ստալօղ զրուածքներուց՝ յետոյ սպրդեր է յոյն պատմագրի մէջ, իբր միսթարուսթիւն Հոռոմական մեծամտութեան, հաւաստելու յետագայից թէ՛ Հայոց Թագաւորի դաւաճանութեամբ յաղթուեցաւ Անտոնիոս:

Պլուտարքոսի բնագիրն ընթերցողի առջև կը դնենք, որոյ ընդգծուած մասերն, ըստ մեզ, եկամուտ են, որք եթէ զեղչուին այն ատեն իսկական բնագիրն կ'ունենանք. մեր յետագայ բացատրութիւնը կը յուսանք համոզէ զընթերցողն:

«Յետ այսորիկ արձակեալ նա զկղէտ պատրէ յԷդիպոսս, ինքն յաղի անկաւ ընդ Արարիս և ընդ Հայոց աշխարհն. և անդ

եկեալ խմբեցան առ նմա ամենայն զօրք և արքայք նիզակակիցք բազում. յորս և յատալեալ յամենեկունց զօրայեալք էր Արտաազդ արքայ Հայոց, և ի ձեռս տալար եւ Ուստոնիոսի վեց հազար աշորաձիւյ և եօթն հազար հետեակոց. և ապա Անտոնիոս հանդէս առնէր զօրունւ իւր հետեակազօր Հոռոմայեցոց վեց բիւրոց, և այրուծին իրեւրացոց և կեղտաց՝ համագունդ ընդ Հոռոմայեցոց՝ էր բիւր մի. իսկ թիւ այլ ևս խուժանին ի միասին ընդ այրուծիոյ և թեթեւագէն զօրականին՝ էր երից բիւրոց»:

Ընդգծեալ տողերն կ'ամփոփեն իրենց մէջ տգիտութիւն և չարամտութիւն. տգիտութիւն աշխարհագրական, չարամտութիւն՝ ճշմարտութիւն թիւրեւոյն մէջ:

Ժամանակագրութիւնն և աշխարհագրութիւնը, ասուած է, պատմութեան երկու աչքերն են. արդ այս երկու աչքերէն գոնէ մին կը պակսի Պլուտարքոսի յիշեալ եկամուտ բնագրին մէջ: Վասն զի երբ օրինակազրի « Յետ այսորիկ արձակեալ նա (Անտոնիոս) գլխեպատրա յեզդիպտոս » կը յաւելու « ինքն յուրի անկաւ ընդ Արարիա և ընդ Հայոց աշխարհն. և անդ եկեալ խմբեցան... Նիզակակիցք... յորս և Արտաազդ »: Կը հարցնենք. Պլուտարքոս կրնար այսպիսի անհիթեթ բան գրել: Մտաբերենք Փրինիկէ և ընդ մէջ Բէլլուսի և Սիդոնի՝ Սպիտակ Աւանը, ուսկից կը մեկնի կլէպպատրա յեզդիպտոս. իսկ ինքն ո՞ր ուղղութեամբ ճամբայ կ'ելլէ և ո՞ր է Անհն բանակի խմբուելու վայրն:

Եթէ ընդունինք մէկ իմաստով թէ՛ Արարիայէն անցնելով, գնաց Հայաստան, ո՞վ կրնայ ծինարդ բռնել, իսկ միւս իմաստով թէ՛ Արարիոյ և Հայոց աշխարհի միջէն յուրի անկաւ. ո՞ր գնաց, ո՞ր կանգ առաւ, որ իւր նիզակակիցներն գային խմբուէին իւր շուրջը: Ընդ մէջ Արարիոյ և Հայոց աշխարհին կայ Սիւրիոյ անապատն և Միջագետք, սակայն ատոնք դեռ Պարթևներու ազդեցութեան տակն էին, Անտոնիոս հոն չէր կրնար զօրաժողով լինել, թո՛ղ զայլ անպատեհութիւնս, առանց կասկած յարուցանելու Պարթևներու մտքին մէջ, որոց

հետ Մոնէշիսի ձեռքով կամ հաշտութիւն կնքեր էր կամ կնքելու վրայ էր: Ուրիմն դառնալով Պլուտարքոսի իսկական բնագրին կը հաստատենք թէ Անտոնիոս գլխեպատրա ճամբու զնելէն յետոյ, ո՛չ ուրեք, և ո՛չ մի տեղ յուրի անկաւ գնալու, այլ եկաց և մնաց Սպիտակ Աւանի մէջ, « և Անի եկեալ խմբեցան առ նմա ամենայն զօրք և արքայք նիզակակիցք բազումք »: Բաց յԱրտաազդայ Արքայէն Հայոց:

Առ այս մի առ մի թուենք հակասութիւններն և ժամանակի քաղաքական խաղերու տգիտութիւնը:

Իշխեալ հատուածի մէջ (էջ 158) ասուած է թէ Արտաազդ վեց հազար ձիաւոր և եօթը հազար հետեակ բերաւ Անտոնիոսի. իսկ մի ուրիշ ներմուծուած հատուածի մէջ (էջ 181) կը գրէ. Արտաազդ իւր տասն և վեց հազար ձիաւորներով հեռացաւ Անտոնիոսի քանակէն: Ընթերցողին կը թողունք ճշդել այս երկու թիւերն: Իսկ մենք մեր նպատակէն չշեղելու համար, կը յաւելունք դարձեալ, ինչպէս միշտ պնդեր ենք, թէ՛ քաղաքական պարագաներ չէին ներքի Հայոց արքային հեռանալու իւր երկրէն: Վասն զի կանխապէս դաշնադրուած էր Անտոնիոսի հետ զօրքը խմբել և ձմերել Հայաստանի մէջ. ուրիմն Արտաազդ իւր 16 հազար ձիաւորներով ինչ խելքով մինչև Փրինիկէ պիտի երթար և յետոյ Արարիայէն անցնելով դառնար ընդ Հայոց աշխարհն: Իսկ եթէ Անտոնիոս Սպիտակ Աւանէն պիտի կտրէր Սիւրիոյ Անապատն (ինչպէս պիտի տեսնենք) և Միջագետք Պարթևաց վրայ գնալու, Հայոց արքային կը գտնուէր ուրիմն կրաստի ժամանակի պայմաններու մէջ, մասնաւոր աւելի վատ, վասն զի այն ժամանակ Միջագետք Հոռոմայեցոց ձեռքն էր. հետեւապէս երբէք յանձն չպիտի առնուր մասնակցիլ այնպիսի կոռուի մը, որու վերջն անկասկած պարտութիւն էր և խորտակումն, որով ոչ թէ միայն պատիւը կը կորսնցնէր կենանքին հետ, այլ և թշնամանալով Պարթևաց հետ ի վտանգի կը զնէր Հայաստանի ազատութիւնն և անկախութիւնը: Քաղաքական

պատշաճութիւն մ'աւ կ'արգելուր Արտաւազդին թէ՛ անձամբ և թէ՛ զօրքով օգնելու Անտոնիոսի, վասն զի այսպիսի մի գործ հաւասար էր Հոկտաւիանոսի և Ծերակուտի հետ կնքած դաշինքը դժեւելու և որովհետեւ այս երկուքի բարեկամութիւնն հարկաւոր և շահաւոր էր թէ՛ իւր անձին և թէ՛ իւր թագաւորութեան համար, ուստի Արտաւազդ բնաւ տեղէն շարժած չէ։

Վերջապէս տարւոյ յառաջացած եղանակն իսկ չէր ներեր Արտաւազդին օգնութեան երթալ հետու աշխարհներ այնպիսի ծանր բանակով։ Վասն զի Անտոնիոս Պարթեւացի հետ մեքենայած հաշտութեան բանազնացութենէն ուզելով օգուտիլ, յանկարծակիի բերելու համար, զորածողով բրած է և մեկնած Սպիտակ Աւանէն (Ռոստոս ամսուն, ըստ որում աշնան գիշերահաւասարը անցած, արդէն նա Մարաստանի մէջ կը գտնուէր և սկսել էր նահանջել (էջ. 163)։ Արդ Հայոց Նաւասարդն և Հոռին, ժողովրդի աշխատութեան ամենածանր և կենսական ամիսներն էին, հնձելու, կալուկտի, այգեկութի և ձմռան պատարասութեանց. ուստի Արտաւազդ ոչ երբէք յանձն պիտի առնուր զէնքի կոչել աշխատաւոր ձեռքերը, որուն պարտաւորած չէր, ի ֆնաս իւր երկրի շահերուն։

Իայց զիցուց անհաւատալին անգամ. եթէ Արտաւազդ ուզենար կամ պարտաւորած իսկ լինէր, երթալու իւր զօրքով յօգնութիւն Անտոնիոսի, չպիտի յաջողէր հասնելու միասալու Հոռմէական բանակին. վասն զի, ըստ բանից Պլուտարքոսի, Անտոնիոս փիւնիկէն, որոշած ժամանակէն կանուխ, ածապարանօք մեկներ էր. «կանխեալ ածապարեալ ինքն ի գործ անդր... մարտ մղեաց ԿԱՆՈՒԻ ՓԱՆ ԶՓԱՄԱՆԱԿ»... և այս գործի մէջ յայտնի կ'երևի որ Անտոնիոս, Մոնէսիսի տեսութենէ յետոյ կը խորշէր Արտաւազդի ընկերակցութենէ, անոր համար արշաւանքը թաքուն կը պահէ և ժամանակէն առաջ ճամբայ կ'ելլէ. « և խաղայր յառաջ՝ ԹՊԻՆԱՆ ՅԱՆԵԿԵ ԶԱՅՈՅ ԱՇԽԱՐՀՆ » (էջ 159) ուր ըստ զանազան պատմւաց և իօղէնի, ՊԱՅ-

ՄԱՆԱԻՐԵԱՒԱՒ էր Անտոնիոս հաւաքել իւր բանակն։

Այս և ասոր նման կարևոր պարագաներ անգիտանալով բնագրի կեղծարարներն, յանգնեցին ևս Հոռմէական բանակին պատահած ծանր ձախողանքէն յետոյ, փոխանակ Անտոնիոսի մէջ փնտռելու պարտութեան բուն պատճառներն (զոր յետոյ պիտի թուենք), իսկոյն Հայոց թագաւորի օժիքէն կը բռնեն՝ թէ նա, նա եղած է Հոռմայեցւոց պարտութեան միակ պատճառը։

Արդարեւ դժուար է համաձայնեցնել Պլուտարքոսը ինքն իրեն հետ, եթէ չընդունինք օտար ձեռք մը իւր պատմութեան մէջ սպրդած։

Մարաստանի մէջ հազիւ մտած, Անտոնիոս կը կորսնցնէ տասը հազար զօրք և պատերազմի բոլոր կահ և կազմածը, առանց որոց անկարելի էր շարունակել պատերազմը։ Այս տեղ (էջ 160) Պլուտարքոս կը գրէ.

« Եւ յայսմանէ ապա յոյժ ի խոր խոցեցան առ հասարակ զօրականք Անտոնիոսի, այնպէս արագարար անակնկալ հանդիպեալք արկածին »։ Իսկ օտար գրիչն կը յաւելու. « Անդ և Արտաւազդ հայ՝ յուսարեկ ի յաջողութենէ Հոռմայեցւոց, առեալ զզօր իւր և տեղի տուեալ զնայր. թէպէտ և ինքնին նա պատճառք մեծապէս եկաց մարտին այնորիկ »։

Այս տողերը Պլուտարքոս չէր կրնար գրել, քանի որ ինքը շատ լաւ գիտէր թէ ո՛վ էր և ինչ էր պատերազմի բուն պատճառը։ Իայց, մեզ համար գեղեցիկ պատմ մ'է զոր կու տայ մեր ձեռքը խորհալիով, հաստատելու Արտաւազդի րացականութիւնը պատերազմական գործողութիւններէն։

Առանց իսկ Հայոց զօրքերուն, Անտոնիոսի գումարած հարիւր հազարի բանակն՝ այնքան մեծ ոյժ էր, որոյ նմանը դեռ Ասիա տեսած չէր։ Հոռմէական բանակներն՝ երեսուն հինգէն վաթսուն հազարը անցած չեն Լուկուլլոսի, Պոմպէոսի և վերջիստիս պատերազմներու մէջ։ Անտոնիոս Արտա-

ազգիին բնաւ պէտք չ'ունէր, եթէ խելքով մղած ըլլար մարտը: Առաջին անգամն էր «կազմութիւն այնչափ հանդերձանացն և ստուարութիւն բանակացն, յորմէ և Հնդկիք ինքնին յայն կոյս Պակտրիացւոց դարհուս, րեցան, և Ասիա ողջոյն ստանահեցաւ»:

Եւ սակայն այդ հսկան, առանց Հայոց թագաւորի օգնութեան, երկրորդ անգամ, խորատուեցաւ Պարթևաց անդիմադրելի նետերու և քազկի թափէն: Հոռոմայեցիք այս անգամ ալ սխալն հասկացան, բայց արդէն ուշ էր: Եւ սակայն Անտոնիոս աշխարհքի առջև իւր պատիւն և հմայքն փրկելու համար, անպատկառ կերպով, դաւաճանութեան կեղտն գրեցին և տարածեցին Հոռոմի մէջ, որուն թէպէտ իւր ամենայն ուժով ընդդիմացաւ (դոստոս, այնուհանդերձ Հոռոմայեցւոց ինքնասիրութիւնն շոյող սուտն, մնաց պատմութեան մէջ): Զայն կրկնեցին ամեն պատմագիրները, առանց կասկածելու անոր ստութեան վրայ, որովհետև մեզի պէս բանակցութիւն պատենք չէին ունեցած՝ մանրամասնօրէն ուսումնասիրելու Զուգակշիռն բնագիրն. զի մեր նպատակն եղաւ ջնջել այդ սև բիծը մեր Գաղատիոյ թագաւորի ճակատէն, որ մինչև անգամ մեր արգելալին բանասէրներուն ոմանց պատճառ տուած է գայթակղելու:

Ուրեմն հաւատանք որ Արտաւազդ Մարաստանի խորերն հասած, Ելքատանը պաշարելէն յետոյ, դասալիք եղած՝ իւր զօրքերով հեռացած լինի Անտոնիոսի բանակէն: Ո՛չ երբէք:

Առաջին կը հարցնենք. ինչպէս անեւ ընդթ եղաւ Արտաւազդ իւր վեց հազար ձիաւորներով և եօթը հազար հետեակներով, որոյ կասկածն իսկ չ'առին, Հոռոմայեցիք և թողին որ «Գաւաճանը» անվրդով հեռանայ երթայ ուր որ կ'ուզէր: Եթէ իմացան Արտաւազդի խորհուրդն, չկասկածեցան որ նա դասալքութեամբ կրնար Պարթևներու կողմն անցնիլ, (մաւնաւոր որ Հ. Գաթրքեան կ'ենթադրէ թէ Արշաւրի հետ ի թանկ էր): Այն ատեն չէ որ Անտոնիոսի և իւր բանակի կորուստն անկասկած էր: Ուրեմն Հոռոմայեցի զօրա-

վարն որ ձեռքի տակ ունէր դեռ մօտ եօթնաստունուհինգ հազարի հետեակ և տասն և հինգ հազար ձիաւորներու բանակ մը, ինչո՞ւ այդ սպառնացող վտանգն չը չէզոքացուց, ըստ զինուորական օրինի վրէժ խնդրելով ակն յայտնի դաւաճանութեանը:

Եթէ Անտոնիոս, որ այնքան դաժանօրէն տասանորդեց Եկրատանի պաշարման համար թողած զինուորներն, որոնք լքեցին խրամներն և շերտերն, զօրաւորագոյն թշնամոյ ճնշման տակ, պիտի հանդուրժէր առանց վրէժ մ'առնելու այն դաշնակցէն որ «ինքնին նա պատճառք մեծապէս եկաց մարտին այնորիկ»: Անշուշտ ո՛չ:

Այդ եթէ Հոռոմայեցի վայրագ զօրավարն, ոչ մի շարժումն չէ ըրած հակառակ Արտաւազդին, նշան է, որ կամ Անտոնիոսի հաւանութեամբ հեռացեր է, ուրեմն դաւաճան չի համարուիր, և կամ Արտաւազդ բնաւ չէ մասնակցած այդ արշաւանքին, որով դաւաճանութեան համբաւն սուտ է:

Երկրորդ կը հարցնենք. Լաւ. Արտաւազդ «առեալ զզօր իւր տեղի տուեալ գնայր»: Ո՛ր, ո՞ր ճանապարհով, Մարաստանի սիրտն հասած, Եկրատանի մօտեւէն յետ դառնալու համար երեք ճանապարհ կար. ա. անցնելով Միջագետքէն, բ. կտրելով Ատրպատականը մինչև Երասխ. գ. միանալ Պարթևներուն հետ: Առաջին ճանապարհով չէր կտրելի, որովհետև թըշնամիներն Հոռոմեական բանակի թիկունքէն կտրեց էին ճանապարհը, որով հարկ պիտի ըլլար Մարաց և Պարթևաց հետ միայնակ կտուր: Ետոյ կային երկու մծնագործ թշնամիք ևս, անապատներն և ծարաւն ու սովը: Երկրորդ ճանապարհով չէր կտրելի, վասն զի նոյն թշնամին ճակատէն պիտի կռուէր և ինքն պիտի ստիպուէր բոլոր ծանրութիւնը ստանձնել, մինչ Հոռոմեական բանակն անգործ պիտի մնար Մարաստանի մէջ, որով Արտաւազդին ոչ մի փրկութեան յոյս կար: Երրորդ ճանապարհն բոլորից վտանգաւորն էր. որովհետև Անտոնիոս ոչ մի կերպով պիտի խնայէր Արտաւազդի «Գաւաճանու-

թեան» և ամենայն ուժով ինկնալով բուռ մը մարդկանց վրայ, վայրկենաբար պիտի ջնջին: Հետևապես Արտաւազդ երբէք չէ առած իւր զօրքն և ի ըաց գնացած, որովհետև երբէք Մարաստան չէ գնացած: Եւ ոչ ինքնին պատճառք եղած մեծապէս կամ փոքրապէս այդ մարտին:

Դարձեալ եթէ Արտաւազդ « յուսարեկ ի յաջողութենէն Հոռմայեցոց» առած իւր զօրքերը քաշուեցաւ, նոյնքան և աւելի աւաղելի դրութեան մէջ էին Հոռմայեցիք, «որ յոյժ ի խոր խոցեցան առ հասարակ, այնպէս արագ արագ անակնկալ հանդիպեալը արկածին»: Արտաւազդէն ուրեմն շուտ՝ Զօրավարին անկ էր մտածել բոլոր բանակին փրկութիւնը, որուն փոքրեկ մասն էր ինքը: Պատմագիր խօսքերէն կը հետևի թէ Անտոնիոս մտաբերած է անմիջապէս նահանջել, և ինքնին զլուր անցնելով « ոչ իբրեւ մարտ դնել կռուել, այլ չու տալ զօրուն»: ասով հարկ չկար Արտաւազդին յանխորհուրդս թողուլ, մեկնել լռելիայն, ի վտանգի դնելով զինքն և իւր բանակն երկու ոխերիմ թշնամեաց վրիժառուութեան:

Արտաւազդ ինչպէս յիշեալ պարագային մէջ՝ պէտք ունէր Հոռմայեցոց պաշտպանութեան, նոյնպէս Անտոնիոս պէտք ունէր հմուտ առաջնորդի մը՝ նահանջելու: Արդ այդպիսի առաջնորդ մը կը պակսի Անտոնիոսի, Արտաւազդ միայն կրնար փրկել զինքն և զԱնտոնիոս և զբանակն. նա և իւր զօրքն կրնային համառօտ և աւելի ապահով ճանապարհով հասցնել Հայաստան: Բայց չկար Արտաւազդ և իւր զօրքն, ուստի Անտոնիոս անծանօթ երկրի մէջ, պաշարուած զարանակալ թշնամիներէ, կը մտածէր նահանջել այն ճանապարհով ընդ որ եկել էր: Այդ տագնապալից ժամունքեր կը պատրաստուէր նա « չու առնել յետս ընդ նոյն ճանապարհ» ԸՆԴ. ԳԱՆ-

ՏԱՅԻՆ ԵՒ ԱՆՄԱՏՅԻՆ » կը ներկայանայ մի Մարտինցի Հայ, խրատ կու տայ Անտոնիոսի լռելիային ճանապարհը բռնել, և կը խոստանայ կարճ ճանապարհով և պաշար հայթաթելով զօրքին, տանել հասցնել մինչև և Հայոց աշխարհը¹: Անտոնիոս կը հաւատայ Հայ առաջնորդին: Մօտաւորապէս 27 օր արկածալից նահանջէն վերջ կը հասնին Երասխի ափը և անվտանգ կ'անցնին այն կողմը: Արտառուչ է այն տեսարանը զոր այսպէս կը նկարագրէ Պլուտարքոս. « Բայց իբրեւ անվտանգ անցանէին և զոտս իւրեանց առեալ կացուցին յաշխարհին Հայոց, յայնժամ նոքա անշուշտ իբրու թէ յանդնդոց իմն գերեմալը ծովուն և դեռ ևս ցամաք տեսեալը, այնպէս երկիւղալից էին ԵՐԻԻԻՆ. և այր յարտասուս հարեալ՝ ընկերին գիրկս ածէր առ խնդին: Ապա գնացեալ շրջեցան նոքա ընդ ԵՐՋԱՆԻԿ ԱՇԽԱՐՀՆ և այնպէս սովեալ մարդին յղիացեալը անխտիր՝ ի կերակուր, յախտս ջերանէին ջրգողութեան և խիթից որովայնի »:

Արտաւազդ իւր գահու վրայէն մտքի աչքով կը դիտէր Հոռմայեցու անմիտ արշաւանքն և գուշակելով հետեանքը, կը կարեկցէր զօրքերուն, որոնք ոչխարի պէս մորթուելու կը քշուէին անապատներու մէջ: Եւ նա իբրեւ իմաստուն հայր մը կը նախատեսէր յաղթուած և չարաչար տանջուած բանակին վերադարձը, և անոնց կը պատրաստէր առատ կերակուրներով սեղանը: Անտոնիոս ալ կերաւ Արտաւազդի հաջը, բայց յետոյ յաճախեց առնել խաբէութիւն իւր բարերարի դէմ: Անխիղճ, սև ոճիւրը զործեց իւր փառասիրութեան և կլէոպատրային հաճոյք մ'ընելու համար, ճշմարտութեան յաղթանակն յաջորդ յօղուածով:

(Վերջը միտ անգամ)

ՄԵՐՈՒ ԵՐԱՅԱՏ

1. Հոռմայեցի պատմիչներէն ոմանց Պլուտարքոսի Մարտացին, ուզեր են հասկանալ Մարսեցի, բնակիչ Խաւիսի քաղաքներէն մէկին, որով նա իբր թէ Հոռմայեցի

գերի մը եղած ըլլալ, Գերի մը այդ ճանապարհները չէր կարող գիտենալ: Մինչ հայն թէ հմուտ կրնար լինել և թէ բարեկամներ ունենալ անցնելիք ճանապարհներու վրայ,